



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 31044

Դեկտեմբեր 7, 1989

Արժանաշնորհ
Տ. Վահրամ Բհնյ. Հագարեան
Առժամեայ Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ
Շրգակօ.

Սիրելի Տէր Վահրամ,

Այսու գիրով կը յայտնենք որ համայնքիդ պատգամաւորի պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք նոր պատգամաւորի եւ անձնափոխանորդին համար, Թեմական Կանոնադրութեան 14-Գ եւ 54 յօդուածներու համաձայն, եւ 1988 տարուան համայնքիդ տեղեկագրին մէջ արձանագրուած տրաստու անդամներու թիւին հիման վրայ:

Կը յանձնարարենք որ ծուխիդ նորընտիր պատգամաւորին անունը եւ հասցէն Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը մինչեւ Փետրուար 17, 1990 որպէս զի կարելի ըլլայ հրատարել զինք 88-րդ Տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 3-5, 1990. Հինգշաբթի, Ուրբաթ եւ Ծաբաթ օրերը՝ հիւրընկալութեամբ Ոստրըր Մասսաչուսեցի Ս. Փրկից Հայց. Եկեղեցոյ:

Կը թելադրենք որ նորընտիր իւրաքանչիւր պատգամաւորի ինքնութիւնը հաստատող վկայագիրը Հոգեւոր Հովիւին, Ծխական Խորհուրդի ատենապետին եւ ատենադպիրին կողմէ ստորագրուած՝ Առաջնորդարան ղրկէք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրներուն հետ:

Կը ներկայենք Առաջնորդարան ղրկուելիք վկայագիրին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով օրինակը՝ որպէս նմոշ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊՈՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Վկայագրի Գրույ

Թուական -----

Այսու գիրով կը հաստատենք որ Տիար կամ Տիկին -----
հաւատաւոր անդամ է մեր Եկեղեցոյ եւ -----ին
գումարուած Տարեկան Անդամական Ժողովի ընթացքին ընտրուած է թեմական պատգա-
մաւոր:

Ծխական Խորհուրդի
Ատենադպիր

Ծխական Խորհուրդի
Ատենապետ

Հոգեւոր Հովիտ

Sample Certificate

Date _____

This is to certify that _____ is a member in good
standing of the _____ Armenian Church; and was duly
elected a Diocesan Delegate by the General Assembly on _____.

Parish Council Secretary

Parish Council Chairman

Parish Priest